ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Իրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 14-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/26**

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կարիքների համար <<Կուտակիչներ, չվերալիցքավորվող և գալվանական մարտկոցներ>>-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026թ. մայսի 13-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2026թ. մայսի 14-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Հարգելի պատվիրատու, Ձեր պարզաբանմանը ի պատասխան, ցանկանում ենք տեղեկացնել, որ DDP INCOTERMS 2020 առաքման պայմանները հատուկ մշակված է ոչ ռեզիդենտներին այս պայմանի շրջանակներում ապրանքներ մատակարարելու Պատվիրատուին՝ վճարելով բոլոր հարկերն ու տուրքերը ապրանքի գնորդի՝ այս դեպքում՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի անունից՝ մաքսային ձևակերպմամբ և ճշգրիտ հասցեով առաքմամբ: Միաժամանակ, ցանկանում ենք տեղեկացնել, որ տարբեր երկրներում գործող ընկերությունները ենթակա են ԱԱՀ-ի հարկման տարբեր դրույքաչափերով: ՀՀ ռեզիդենտների կողմից Հայաստան ներմուծվելիս այս ապրանքները ենթակա են 20 տոկոս ԱԱՀ-ի և տուրքերի՝ կախված այն երկրից, որտեղից դրանք ներմուծվել են: Վերոնշյալի հիման վրա և կոռուպցիոն ռիսկերը կանխելու և ՀՀ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար հավասար պայմաններ ապահովելու նպատակով, ընդունելի ենք համարում ոչ ռեզիդենտների համար DDP INCOTERMS 2020 առաքման տարբերակի սահմանումը: Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 4-ի թիվ 526-Ն որոշման մեջ չենք գտել որևէ կետ, որը սահմաներ ՀՀ ոչ ռեզիդենտների կողմից ապրանքների մատակարարումը CIP 2010 պայմաններով: Խնդրում ենք նշել այս որոշման այն կետը, որը սահմանում է ՀՀ ոչ ռեզիդենտների համար CIP INCOTERMS 2010 մատակարարման պայմանները:

Պարզաբանում N 1

Ի պատասխան Ձեր պարզաբանման հարցման

Հարգելի մասնակից,

Ի պատասխան Ձեր հարցման՝ կապված գնման ընթացակարգի հրավերով սահմանված առաքման պայմանների հետ, հայտնում ենք, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, հանդիսանալով պետական կազմակերպություն, իր գնումների գործընթացները կազմակերպում է բացառապես ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան:

Պարզաբանում ենք, որ գնման գործընթացի կազմակերպման տրամաբանությունը հիմնված է մասնակիցների կարգավիճակի վրա.

1. **ՀՀ ռեզիդենտ մասնակիցների դեպքում՝** Պատվիրատուն ապրանքը պատրաստի վիճակում ձեռք է բերում անմիջապես տեղական մատակարարից՝ ՀՀ տարածքում:
2. **Ոչ ռեզիդենտ մասնակիցների դեպքում՝** գործընթացը դիտարկվում է որպես ապրանքի ներմուծում այլ երկրից, որի պարագայում, համաձայն ՀՀ մաքսային օրենսդրության, ներմուծման մաքսային ձևակերպումների և հարկերի փաստացի վճարման պարտավորությունը կրում է Պատվիրատուն (ներմուծողը): Ոչ ռեզիդենտ կազմակերպությունները չեն կարող հանդես գալ որպես

հայտարարատու ՀՀ մաքսային մարմիններում, ինչն անհնարին է դարձնում DDP պայմանի կիրառումը:
Հարկ ենք համարում ընդգծել, որ Ձեր կողմից առաջարկվող **DDP պայմանի կիրառումը կստեղծի ակնհայտ անհավասար մրցակցային պայմաններ**: Այն արհեստականորեն կվատթարացնի այն ռեզիդենտ մասնակիցների վիճակը, որոնք ապրանքն արդեն իսկ ներմուծել են ՀՀ տարածք, վճարել են բոլոր սահմանված մաքսատուրքերն ու ԱԱՀ-ն և իրենց գնային առաջարկը ձևավորել են այդ կատարված ծախսերը ներառելով:
Միաժամանակ, գնահատող հանձնաժողովը հայտերի համեմատության փուլում ոչ ռեզիդենտի CIP պայմանով առաջարկած գնին ավելացնում է ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի և տուրքերի գումարները: Միայն այս մեխանիզմն է ապահովում արդար, թափանցիկ և հավասար մրցակցային դաշտ ինչպես այլ երկրներից ներմուծողների, այնպես էլ ապրանքը ՀՀ-ում արդեն իսկ մաքսազերծած ռեզիդենտների միջև՝ բացառելով կոռուպցիոն ռիսկերը:
Ելնելով վերոգրյալից՝ հրավերով սահմանված CIP առաքման պայմանները փոփոխման ենթակա չեն:
Հարգանքով՝
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ գնահատող հանձնաժողով

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանին-ին:

Հեռախոս՝ +37491 78 11 54:

Էլեկտրանային փոստ՝ hasmik.hakobyan@armats.am

ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝

Հ. Սարգսյան		Հանձնաժողովի նախագահ
Մ.Նազարյան		Հանձնաժողովի անդամ
Է. Հակոբյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Վարդանյան		Հանձնաժողովի անդամ
Հ. Մաթևոսյան		Հանձնաժողովի անդամ
Հ.Հակոբյան		Հանձնաժողովի քարտուղար